

Հաստատված է  
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և  
հրդեհային անվտանգության տեսչական  
մարմնի կառավարման խորհրդի  
2022 թվականի նոյեմբերի 30-ի N1-L ի  
 որոշմամբ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ  
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

# 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Կառուցվածք.....	5
Քարտեզ.....	6
1.Տրանսպորտային անվտանգության բնագավառ.....	8
1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը.....	8
1.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը.....	11
1.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ.....	12
2. Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ.....	14
2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը.....	14
2.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը.....	16
2.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ.....	20
3. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.....	22
3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը.....	22
3.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը.....	23
3.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ.....	30
4. Քաղաքաշինության ոլորտ.....	33
4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը.....	33
4.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը.....	34
4.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ.....	37
5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ.....	39
5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը.....	39
5.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը.....	39
5.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ.....	41
6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ.....	43
7. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ.....	48

## Ներածություն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ սահմանված 2021-2026 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ սահմանված 2021-2026 թվականների ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի նպատակները և իր կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված կանխարգելիչ (այդ թվում իրազեկման) միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և ակնկալվող արդյունքը:

**Տեսչական մարմնի նպատակն** օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

**Տեսչական մարմնի խնդիրներն** են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, տիեզերական գործունեության, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ու հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Դրանց կարգավորման ուղղությամբ 2022 թվականի ընթացքում կատարված աշխատանքը պարբերաբար լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով: Գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Տեսչական մարմինն իր կողմից ՀՀ օրենքով սահմանված

վերահսկողական և այլ գործառնությունների իրականացման վերաբերյալ մշտապես թարմացվող մանրամասն տեղեկատվություն է ներկայացնում իր պաշտոնական ինտերնետային կայքում: Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը կրում են հետևողական բնույթ և նպաստում են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ իրազեկվածության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հաշվի առնելով Տեսչական մարմնի կողմից կարգավորվող խնդիրների կենսական նշանակությունը հանրության համար՝ թե՛ գծի հեռախոսահամարով մշտապես տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային դիմում ներկայացնելու, որը միտված է դիմումների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելուն:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա խնդիրների համակողմանի և արհեստավարժ լուծումը պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ՝ թե՛ մարդկային, թե՛ տեխնիկական: Առաջնահերթությունների թվում է մարդկային կապիտալի զարգացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների (այդ թվում՝ միջազգային) կազմակերպումը:

2022 թվականի տարեկան գործունեության ծրագրով սահմանված, սակայն տարաբնույթ օբյեկտիվ պատճառներով չիրականացված միջոցառումները ևս ներառվել են 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրում:

Վերահսկողության ոլորտների առկա խնդիրները և ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումները Գործունեության ծրագրում առանձնացված են ըստ բնագավառների:

## Կառուցվածք

### Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

- *Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն*
- *Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն*
- *Որակի ապահովման վարչություն*
- *Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն*
- *Տրանսպորտային անվտանգության վարչություն*
- *Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն*
- *Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն*
- *Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն*
- *Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին*

### Տարածքային ստորաբաժանումներ

- *Երևանի տարածքային բաժին*
- *Սյունիքի տարածքային բաժին*
- *Արարատի տարածքային բաժին*
- *Արմավիրի տարածքային բաժին*
- *Արագածոտնի տարածքային բաժին*
- *Գեղարքունիքի տարածքային բաժին*
- *Կոտայքի տարածքային բաժին*
- *Տավուշի տարածքային բաժին*
- *Լոռու տարածքային բաժին*
- *Շիրակի տարածքային բաժին*
- *Վայոց ձորի տարածքային բաժին*

Քարտեզ

ՀՀ ՔՏՀԱՏՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ



# 1.Տրանսպորտի բնագավառ

## *1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը*

2023 թվականի գործունեության ծրագիրն ընդգրկում է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում կատարված հսկողական, վերահսկողական միջոցառումների, այդ թվում ստուգումների շնորհիվ բացահայտված հետևյալ ռիսկերի հետևողական նվազեցմանն ուղղված միջոցառումները:

1. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով: Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը:

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:

3. ՀՀ տարածքում Ոչայավտոկայարան՝ ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր պահպանման, ուղևորների նստեցման և երթնեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին:

4. 2022 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովվելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր



բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառնությունների արդյունքում կազմվել է տրանսպորտի բնագավառում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 233 արձանագրություն, սակայն, էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով: Անհրաժեշտ է լրացուցիչ և/կամ ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում Ոսրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տույժերի չափերի բարձրացում:

5. 2022 թվականի ընթացքում հանրությունից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնությանը, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, մրցույթային հանձնաժողովի սահմանված փոխադրավարձի գերազանցմամբ երթուղիների սպասարկման իրականացմանը, ինչպես նաև որոշ կանոնավոր երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը:

6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ: Տվյալ ոլորտում վերահսկողությունը բացի շարժական կշեռքից իրականացվում է օգոստոս ամսին շահագործման հանձնված Սիսիանի և Արմավիրի կշռման կայաններում կշեռքներով:

7. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումն առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկմանը և անվտանգության ապահովմանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև հավասար մրցակցային պայմանների ապահովում:

8. \*Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ:

\*Տվյալ գործառույթը հնարավոր է կատարել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների և համապատասխան մասնագետների համալրման դեպքում

9. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերն ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2195-Ն որոշմամբ հաստատվեց տեխնիկական զննության անցկացման կայանների ստուգման ստուգաթերթը, սակայն մինչ օրս չի հաստատվել դրանց ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանությունը, ինչի հետևանքով տվյալ ոլորտում Տարեկան ծրագրով ստուգումներ չեն նախատեսվել:

10. 2021 թվականի դեկտեմբերի 9-ից ուժի մեջ են մտել, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը, գազաբալոնների պարբերական վկայագրմանը և դրանց լցավորմանը ներկայացվող պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության 1998-Ն և 2011-Ն որոշումները, իսկ ս.թ. օգոստոսի 4-ից ուժի մեջ է մտել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության ստուգման ստուգաթերթը, սակայն մինչ օրս չի հաստատվել դրանց ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանությունը, ինչի հետևանքով տվյալ ոլորտում Տարեկան ծրագրով ստուգումներ չեն նախատեսվել:

11. Տեսչական մարմնի ուշադրության շրջանակում շարունակում են մնալ ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) տեղադրված գովազդները (գովազդային վահանակները):

12. Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանն, որի օրենսդրական դաշտը մինչ օրս կարգավորված չէ:

### ***1.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը***

2022 թվականի 9 ամիսների ընթացքում կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող սուբյեկտների մոտ իրականացվել է 14 ստուգում: Ստուգումների ընթացքում բացահայտվել է 46 խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

- Տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննման՝ նախատեսված երկարության դիտափոսը /էստակադր/ առկա չէ – 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ,

- Փոխադրումներ իրականացնողի տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործումը չի իրականացվում համապատասխան պարբերականությամբ և սահմանված ժամկետներում տեխնիկական զննության անցկացման պայմաններում – 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ,

- Տրանսպորտային միջոցների կայանման տարածքը չի համապատասխանում անհրաժեշտ պայմաններին – 3 տնտեսավարող սուբյեկտի մոտ:

Ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 6 կարգադրագիր: 8 օբյեկտ շահագործվում էին առանց խախտումների:

Նշված ժամանակահատվածում տվյալ ոլորտում իրականացվել է 4 վերստուգում, որոնց արդյունքում 2 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ՝ թերությունների բացակայության վերաբերյալ: Վերստուգումների արդյունքում վերացվել է ընդհանուր առմամբ 15 խախտում:

Միաժամանակ ՀՀ վարչապետի հանձնարարականով իրականացվել է 8 ոչ պլանային ստուգում տեխնիկական զննության կայաններում: Ստուգումների արդյունքում 3 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր, 5 սուբյեկտ շահագործվել է առանց խախտումների: Իրականացվել է 1 վերստուգում, որի արդյունքում տրվել է տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ: Վերստուգման արդյունքում վերացվել է 1 խախտում: Մինչև տարեվերջ ՀՀ վարչապետի հանձնարարականով կիրականացվեն ոչ պլանային

ստուգումներ գազաբալնային սարքավորումների տեղադրման/վկայագրման 19 կայաններում:

### ***1.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ***

Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը:

Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

➤ *Օրենսդրական դաշտի կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.*

- միջպետական բեռնափոխադրում իրականացնող ծանրաքաշ մեքենաների նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով՝ Տեսչական մարմինը մասնակցում է ԵԱՏՄ թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորման շրջանակներում կատարվող աշխատանքներին.
- անվավոր տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու նպատակով նախատեսվում է ներկայացնել առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու համար»:

➤ *Տեսչական մարմնի կադրային հազեցվածության և մարդկային ներուժի զարգացման ապահովում, միասնական աշխատելառճի ձևավորում.* Տրանսպորտային անվտանգության վարչության կողմից տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում:

➤ *Միջազգային փորձն* ուսումնասիրելու նպատակով տեսակոնֆերանսների կազմակերպում, այդ թվում՝ նաև TAIEX-ի շրջանակում:

➤ *Համագործակցություն շահագրգիռ մարմինների հետ*, այդ թվում՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև ՀՀ ոստիկանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ օրենսդրական կարգավորումները կատարելագործելու, միասնական պետական մոտեցում ձևավորելու նպատակով:

➤ *Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ*. վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

## 2. Էներգետիկայի բնագավառ

### *2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը*

2023 թվականի գործունեության ծրագիրը կազմված է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում իրականացրած տեխնիկական ստուգումների, էներգահամակարգում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների արդյունքում բացահայտված խախտումների պատճառների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց պատկանող էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացրած տեղեկատվությունների վերլուծությունների, քաղաքացիներից և տնտեսվարող սուբյեկտներից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների և ռիսկերի հիման վրա: Այն է.

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվում են մի քանի 6, 10, և 0.4 կՎ էլեկտրատեղակայանքներ, որոնք ներառված չեն ընկերության հաշվեկշռում, հետևաբար, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանց սեփականատերն անհայտ է: Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքներն առանց համատեղ շահագործման և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն ապահովելու համար: Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

2. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննության իրականացման համար տեխնիկական կանոնակարգերի նորմերի խախտման բացահայտման և համապատասխան եզրակացություն կազմելու նպատակով Տեսչական մարմնին իրավական ակտերով վերապահված գործառույթը սահմանված կարգով և որակով չի իրականացվում համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների անբավարարության պատճառով, որի արդյունքում անհնար է դառնում սահմանված կարգով համալրել Տեսչական մարմնի կողմից պատահարների մասնագիտական քննություններն իրականացնող հանձնաժողովների կազմը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող պատահարների մասնագիտական քննությունն իրականացնող հանձնաժողովների կազմերում Տեսչական մարմնի մասնագետների ներգրավումը:

3. Տվյալ գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելուն որոշակի խոչընդոտ է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունում որոշակի ԳՈՍՏ-երի բացակայությունը: Տվյալ փաստերը տնտեսվարող սուբյեկտների կողմից տարաբնույթ մեկնաբանությունների, իսկ առանձին դեպքերում նաև շահարկման տեղիք է տալիս, ինչն ավելացնում է գործարկվող էներգատեղակայանքների ռիսկայնության աստիճանը:


4. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-Ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից ուժը կկորցնեն էներգետիկայի և էներգասպառման ոլորտի թվով 17 տեխնիկական կանոնակարգեր, որոնք հիմք են հանդիսանում Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացման համար: Տվյալ տեխնիկական կանոնակարգերը նոր իրավական ակտերով փոխարինվելուց հետո, ուժը կորցրած կճանաչվեն նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածները:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված իրավական ակտերում ներառված կլինեն ժամանակակից տեխնոլոգիական ու ավտոմատ համակարգերով հագեցած էներգատեղակայանքներին և դրանց շահագործման անվտանգության

կանոններին ներկայացվող պահանջներ՝ հին տեխնիկական կանոնակարգերը նոր իրավական ակտերով փոխարինման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա վերապատրաստելու Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող մասնագետներին:

## 2.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը

2022թ. 9 ամսվա ընթացքում կատարվել են ստուգումներ 124 տնտեսավարող սուբյեկտների մոտ: Ստուգումների արդյունքում արձանագրվել է 2012 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



17 տնտեսավարող սուբյեկտների օբյեկտներում վերստուգումներ են իրականացվել, որոնց արդյունքում պարզվել է, որ արձանագրված 322 խախտումից 61-ը (18.9%-ով) վերացվել են:

Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 92 կարգադրագիր:

**Տնտեսավարող 102 սուբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) ստուգումների արդյունքում գրանցվել է 417 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների՝ 2012-ի 20.7%-ը:**

Հիմնական խախտումներն են .



- *Գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգները՝ հաստատված կազմակերպության գլխավոր ինժեների կողմից, առկա են – 64 դեպք:*
  - *Կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգումն անցկացվում է կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ– 45 դեպք:*
  - *Գազատար խողովակները չունեն արտադրող գործարանների հավաստագրերը կամ սեփականատիրոջ կողմից հաստատված դրանց պատճենները, որոնք հաստատում են խողովակների համապատասխանությունն ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին – 31 դեպք:*
  - *Գազատարի ամրության և կիպության փորձարկումը չի իրականացվում, փորձարկման արդյունքները չեն գրանցվում շինարարական տեղեկաթերթիկում և չեն հաստատվում համապատասխան ստորագրություններով – 29 դեպք:*
  - *Գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների, այդ թվում նաև եռակցողների, գիտելիքների ստուգումն անցկացվում է կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 27 դեպք:*
  - *Կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգում չանցկացնելը կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 25 դեպք:*
- Տնտեսավարող 15 սուբյեկտներում (կամ դրանց մասնաձյուղերում) վերստուգումների արդյունքում վերացվել է 37 խախտում:

**Գագաբաշխման և գագասպատման միջին և բարձր ճնշման 94 էներգատեղակայանքներում** ստուգումների արդյունքում բացահայտվել է 739 խախտում, ինչը կազմում է խախտումների ընդհանուր քանակի 36.7%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *Գագատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հետևյալ հրահանգներն առկա են՝ հրդեհային անվտանգության - 74 դեպք:*
- *Գագատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հետևյալ հրահանգներն առկա են՝ աշխատանքների կատարման անվտանգ մեթոդների - 70 դեպք:*
- *Գագատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկումը (զննում, կարգաբերում և մասնակի նորոգում) կատարվում է - 67 դեպք:*
- *Գագատարի տեխնիկական շահագործման՝ պրոֆիլակտիկ պլանային վերանորոգումը կատարվում է - 66 դեպք:*
- *Գագատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հետևյալ հրահանգներն առկա են՝ արտադրական տեխնոլոգիական - 53 դեպք:*

**Գագաբաշխման և գագասպատման միջին և բարձր ճնշման 15 էներգատեղակայանքներում** վերստուգումների արդյունքում վերացվել է 8 խախտում:

**Գագափոխադրման բարձր ճնշման 8 օբյեկտում** տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է 142 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների՝ 7.1%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *առկա չեն հետազննման արդյունքներով ձևակերպված արձանագրությունները՝ գագատարի հետազննման աշխատանքների վերաբերյալ, համաձայն մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված ծրագրերի և միջոցների - 6 դեպք,*
- *չի կատարվում արտադրական, պաշտոնական հրահանգների և տեխնոլոգիական սխեմաների վերանայումը՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ - 6 դեպք,*
- *առկա չեն կազմակերպությունների կողմից մշակված ՄԳ-երի օբյեկտների շահագործման մեթոդներն ու սխեմաները կանոնակարգող պաշտոնական հրահանգները - 5 դեպք:*
- *չեն գրանցվում տեխ.սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքները՝ կազմակերպության տեխնիկական փաստաթղթերում - 5 դեպք:*

- *չեն գրանցվում զննումների ընթացքում հայտնաբերված խախտումները, վնասվածքները և մերժումները գազատարի գծային մասի զննման մատյանում – 5 դեպք:*

**110ԿՎ և Բարձր լարման ՀԷՑ-ի էլեկտրատեղակայանքի՝ էլեկտրահաղորդման 38 օդային գծի** տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է 276 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների՝ 13.7%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *Առկա չեն ՕԳ-ի ուղեգծի տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալները - 33 դեպք:*
- *Պահպանված չեն կոռոզիայից ՕԳ-ի հողակցող հաղորդիչները: Բաց տեղադրած հողակցող հաղորդիչները չունեն սև ներկվածք - 32 դեպք:*
- *Առկա չեն թռչունների կողմից ՕԳ-ի հենարանների մեկուսացման ինտենսիվ աղտոտման գոտիներում թռչուններին խրտնեցնող և վրածածկումը բացառող հատուկ սարքվածքները - 29 դեպք:*
- *Չեն կատարվում հպման լարումների չափումները՝ հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո ոչ պակաս, քան յուրաքանչյուր 6 տարին մեկ անգամ - 25 դեպք:*
- *Չեն կատարվում ՕԳ-ի վրա ստուգումներն ու չափումները - 21 դեպք:*

**110կվ և բարձր լարման ՀԷՑ-ի 44 էլեկտրատեղակայանքի՝ ենթակայանի և բաշխիչ սարքվածքի** ստուգումների արդյունքում բացահայտվել է 438 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների՝ 21.8%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *Առկա չեն ԲՄ- տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալները - 40 դեպք:*
- *Չեն կատարվում հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո հպման լարումների չափումները, ոչ պակաս, քան 6 տարին մեկ - 38 դեպք:*
- *Աշխատանքային և վթարային լուսավորությունը՝ ենթակայանում և կարգավարական կետերում սնման աղբյուրների անջատման դեպքում, վթարային լուսավորությունն ավտոմատ կերպով չի հոսանքափոխվում կուտակիչ մարտկոցի կամ սնման այլ անկախ աղբյուրի վրա - 30 դեպք:*
- *ԲՄ-ի և ՑԼՄ-ի բոլոր մետաղական մասերը չունեն հակաքայքայիչ ծածկույթ - 30 դեպք:*

- Յուրաքանչյուր մալուխային գիծ չունի իր համարը կամ անվանումը, բաց անցկացված մալուխները, ինչպես նաև բոլոր մալուխային կցորդիչները չունեն պիտակներ, որոնց վրա նշված լինեն մակնիշները, լարումները, հատույթները, գծի համարները կամ անվանումները – 28 դեպք:

Վերոնշյալ բնագավառում 2 վերստուգումների արդյունքում վերացվել է 16 խախտում:

Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

### **2.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ**

➤ Բացահայտված խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտություն կա կատարել մի շարք *օրենսդրական փոփոխություններ*: Մասնավորապես,

- Նոր իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո անհրաժեշտ է «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածների մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:
- Վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկել և առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի բնագավառի անհրաժեշտ ԳՈՍՏ-երի ներդրման վերաբերյալ:

➤ Կշարունակվեն էներգետիկայի օբյեկտների բազավորման և ըստ ռիսկայնության բաշխման աշխատանքները՝ հիմք ընդունելով ստուգումների արդյունքները:

➤ Կարևորելով էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերլուծության դերը ռիսկայնությամբ առաջնորդվելու համատեքստում՝ կձեռնարկվեն միջոցներ պատահարների վերաբերյալ ամբողջական և հստակ տեղեկատվություն ստանալու ուղղությամբ, որի հիման վրա հնարավոր կլինի օբյեկտի վտանգի հաշվարկի մեջ ներառել նաև այդտեղ արձանագրված պատահարների քանակը և բարդության աստիճանը՝ առավել ռիսկային օբյեկտները բացահայտելու և ստուգումները դեպի այդ հատված նպատակաուղղելու համար:

➤ Վերապատրաստումների միջոցով Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող մասնագետներին ծանոթացնել նոր իրավական ակտերի բովանդակությանը:

➤ Վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման նպատակով օգտագործել տպագիր և առցանց ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

### 3. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ

#### *3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը*

1. 2022թ. 9 ամիսների ընթացքում իրականացվել է 683 հրդեհատեխնիկական հետազոտություն, որից 338-ը բժշկական սպասարկում իրականացնող առողջապահական օբյեկտներում: Հետազոտությունների արդյունքում 328 բուժ. հաստատություններում բացահայտվել է ընդհանուր առմամբ 2019 խախտում: 2022 թվականի մայիսի 18-ի թիվ ՀՆՁ/04.1/83-2022 հանձնարարականով կատարվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ 189 նախակրթական հաստատություններում: Հետազոտությունների արդյունքում 188 նախակրթական հաստատություններում բացահայտվել են 1337 տարաբնույթ խախտումներ: Հաստատությունների տնօրեններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և տրվել են բանավոր ցուցումներ՝ բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար: Անհրաժեշտ է պարզել նաև ՀՀ տարածքում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մարդկանց զանգվածային ներկայության վայրերի Փթատրոններ, կինոթատրոններ, համերգասրահներ և համանման այլ օբյեկտներ՝ համապատասխանության աստիճանը գործող նորմերի հակահրդեհային պահանջներին:

2. ՓՏեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին՝ ՀՀ օրենքում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը արտադրական վտանգավոր օբյեկտների ըստ իրենց ծավալների և վտանգավորության տարանջատումն է և Ուրտադրական վտանգավոր սարքավորում Սարք՝՝ հասկացության ընդգրկումը: Նախատեսվում է նաև վարչական տույժերի չափերի տարանջատում՝ կախված վտանգավոր օբյեկտի Սարքի՝ ծավալներից և վտանգավորությունից:

3. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տեխնիկական կանոնակարգերը, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի

կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու համար:

4. ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ Տեսչական մարմնի լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, որը ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:

5. Երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով Տեսչական մարմնի մասնագետների կողմից ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքներ են իրականացվում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում: Միաժամանակ նախատեսվում է իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով:


6. Անհրաժեշտություն է առաջացել համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատված 16-րդ հավելվածը ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1131-Ն որոշման դրույթներին:

### ***3.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը***


Տեսչական մարմնի 2022 թվականի 9 ամիսների ընթացքում Ստուգումների տարեկան ծրագրով իրականացվել են 341 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 422 օբյեկտների ստուգումներ: Եվս 32 ոչ պլանային ստուգում է իրականացվել, որոնցից 4-ը՝ հանրությունից ստացված դիմում-բողոքների, 12-ը՝ պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա և 16-ը՝ ՀՀ վարչապետի

հանձնարարականով: 2022 թվականի 9 ամիսների ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ընդհանուր առմամբ իրականացվել է 454 ստուգում և 99 վերստուգում:

Ըստ մարզերի 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածում կատարած ստուգումները/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.




Նշված ժամանակահատվածում ստուգումների արդյունքում արձանագրվել է 2926 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝





Ընդհանուր նշանակության պահեստների և բազաների տնտեսավարող սուբյեկտների 32 օբյեկտում իրականացվել է ստուգում, որից 7-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականի և 3-ը պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Բացահայտվել է 366 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,5%-ը (ընդհանուր խախտումների քանակը 2926 է): 3 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- պահեստային շինությունում օգտագործվում է խրոցակային վարդակներ – 24 դեպք,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմինին - 23 դեպք,
- էլեկտրամատակարարումն անջատող սարքերը (անջատիչները) չեն գտնվում պահեստից դուրս - 20 դեպք,
- կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 18 դեպք,

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում - 18 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **200 մ<sup>2</sup> և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 134 օբյեկտ**, որոնցից 2-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականի և 6-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 833 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 28,5%-ը: 6 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին - 99 դեպք,*
- *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով - 77 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում - 70 դեպք,*
- *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ<sup>3</sup> տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 59 դեպք,*
- *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա - 53 դեպք:*

Մինչև 200 մ<sup>2</sup> մակերեսով առևտրի և հասարակական սննդի 15 օբյեկտում ստուգումների արդյունքում բացահայտվել է 25 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,9%-ը: Ստուգումներից մեկն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: 4 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

**200 մ<sup>2</sup> և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 69 օբյեկտներում** բացահայտվել է 358 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,2%-ը: Ստուգումներից 5-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի և 4-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Առանց թերությունների շահագործվող օբյեկտները 12-ն են: Հիմնական խախտումներն են.

- *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 43 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 42 դեպք,*

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 41 դեպք,*
- *500 մ<sup>3</sup>-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 36 դեպք,*
- *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակո – 34 դեպք:*

**Մինչև 200 մ<sup>2</sup> մակերեսով արտադրական կազմակերպությունների 13** օբյեկտներում բացահայտվել է 55 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,9%-ը: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

**Բենզալցակայանների** 107 օբյեկտներում բացահայտվել է 450 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 15,4%-ը: Ստուգումներից 1-ը՝ իրականացվել է պետական մարմիններից ստացված գրության և 4-ը՝ դիմում-բողոքի հիման վրա: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ 15 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ<sup>3</sup> տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 70 դեպք,*
- *Հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն - 52 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 52 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 50 դեպք,*
- *բենզալցակայանը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 47 դեպք,*
- *բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 47 դեպք:*

**Բնակելի շենքերի, հյուրանոցների և հանրակացարանների 17 օբյեկտում** բացահայտվել է 92 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,1%-ը: Ստուգումներից 1-ն իրականացվել է պետական մարմիններից ստացված գրության հիման վրա: Առանց թերությունների շահագործվում է 2 օբյեկտ: Հիմնական խախտումներն են.

- *Կախված հարկայնությունից բնակելի շենքերը, հյուրանոցները, հանրակացարանները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 9 դեպք,*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 8 դեպք,*
- *Կազմակերպության աշխատակազմն ապահովված չէ անհատական պաշտպանական միջոցներով (շնչառական դիմակներ, հակազագեր և այլն) – 7 դեպք,*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 7 դեպք,*
- *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 7 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **գազալցավորման կայանների 87** օբյեկտ, որոնցից 1-ը՝ դիմում-բողոքի հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 559 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 19,1%-ը: 6 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

- *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ<sup>3</sup> տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 48 դեպք,*
- *գազալցակայանի տարածքում տեղակայված շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 45 դեպք,*
- *ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 40 դեպք,*
- *հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 35 դեպք:*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 33 դեպք:*

**Գիտական և ուսումնական հաստատությունների 7** օբյեկտներում բացահայտվել է 66 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,3%-ը: Հիմնական խախտումներն են.


- *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 5 դեպք,*
- *կախված մակերեսի չափերից գիտական և ուսումնական հաստատությունների շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով - 5 դեպք,*

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տազնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 5 դեպք,*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 5 դեպք,*
- *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 4 դեպք:*


**Պայթուցիկ նյութերի պահեստների համար** տնտեսավարող սուբյեկտների 6 օբյեկտում բացահայտվել է 22 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,8%-ը: Ստուգումներն իրականացվել են ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

**Նավթամթերքների պահեստների համար** տնտեսավարող սուբյեկտների 3 օբյեկտում բացահայտվել է 12 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,4%-ը: Ստուգումներից մեկն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: **Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող 2 կազմակերպությունում** բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,3%-ը: **Առողջարարական, հանգստյան տների և զբոսաշրջության հաստատությունների** համար տնտեսավարող սուբյեկտների 3 օբյեկտում բացահայտվել է 23 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,8%-ը: **Հիվանդանոցների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների** համար տնտեսավարող սուբյեկտների 3 օբյեկտում բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,3%-ը: **Կառավարման հիմնարկների** համար տնտեսավարող սուբյեկտների 4 օբյեկտում բացահայտվել է 29 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,0%-ը: **Մանկական նախադպրոցական 2 հիմնարկում** բացահայտվել է 14 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը: **Տրանսպորտային 1 հիմնարկում** բացահայտվել է 2 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,1%-ը:

9 ամիսների ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 404 կարգադրագիր, 54 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:



Իրականացվել է 99 վերստուգում, որոնց արդյունքում արձանագրվել է խախտումների քանակի նվազում 53,65%-ով: Վերստուգումներով հաստատվել է, որ 42 օբյեկտ 42,400 վերացրել են ստուգումներով բացահայտված թերությունները:



2022 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված ստուգումների 92,95%-ը նախատեսված էր 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 7,05%-ը՝ ոչ պլանային է:

### 3.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➤ Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու, այդ թվում նաև մատնանշված խնդիրները կարգավորելու համար առաջնային է օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Մասնավորապես,

- ԸՏԵԻՆԻԿԱԿԱՆ անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը.
- Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև տիեզերական գործունեության բնագավառում վերահսկողություն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների

մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

- ԵՄՏՍ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև տիեզերական գործունեության բնագավառում վերահսկողություն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

➤ Դինամիկ քարտեզի հնարավորությամբ DATABASE MANAGEMENT SYSTEM ծրագիրն էապես կթեթևացնի Տեսչական մարմնի կողմից կատարվող աշխատանքը՝ միաժամանակ բացառելով կրկնվող տեղեկատվության մուտքագրումը և ռիսկի հաշվարկի սուբյեկտիվությունը, շահերի բախումը: Ծրագրին կից դինամիկ քարտեզը հնարավորություն կտա տեսնելու նախագծված (գործող) օբյեկտի տեղակայումը իրեն շրջապատող այլ օբյեկտների նկատմամբ, դրանց միջև հակահրդեհային միջտարածությունները, կառույցների հրդեհավտանգավորության աստիճանը\*\*:

\*\*Տվյալ միջոցառումը հնարավոր է կատարել միայն համապատասխան ֆինանսավորման դեպքում

➤ 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ ՀՀ տարածքում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

➤ 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ ՀՀ տարածքում գործող զանգվածային ներկայության վայրերում ընթացողներ, կինոթատրոններ, համերգասրահներ և համանման այլ օբյեկտներ, ինչպես նաև մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում՝ ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով:

➤ 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ստուգայցեր ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում ՀՀ տարածքում գործող բոլոր մանկական հանգստյան ճամբարներում:

➤ Անհրաժեշտություն է առաջացել համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատված 16-րդ հավելվածը ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1131-Ն որոշման դրույթներին:

➤ Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունն անմիջականորեն կախված են հրդեհային և տեխնիկական հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից: Տեսչական մարմնի կառուցվածքային վարչությունը նախատեսում է պարբերաբար կազմակերպել տարածքային ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների վերապատրաստումներ:

➤ Շարունակվելու են օբյեկտների բազավորման և ըստ ռիսկայնության բաշխման աշխատանքները՝ հիմք ընդունելով ստուգումների արդյունքները:

➤ Վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման նպատակով օգտագործել տպագիր և առցանց ՋԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:



## 4. Քաղաքաշինության բնագավառ

### *4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը*

1. Տեսչական մարմնի կողմից 2021-2022 թվականների ընթացքում Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական օբյեկտներում իրականացված ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվել է այն փաստը, որ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրվում են կառուցապատողներին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, որի պատճառով կառուցապատողների համար հետագայում շինարարական աշխատանքներն ավարտելու և ավարտված շինարարական օբյեկտի հանձնաժողովին մասնակցության շրջանակներում Տեսչական մարմնին դիմելու ժամանակ առաջանում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված պահանջների խախտումով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման դեպքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվում է չլիցենզավորված գործունեության դեպքեր, որի համար կառուցապատողի նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ: Բացահայտվում են նաև ՀՀ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերի քաղաքաշինության բնագավառի իրավական ակտերի և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտմամբ աշխատանքային նախագծերի համաձայնեցման ու տրամադրման դեպքեր, որոնք հետագայում կարող են բերել անդառնալի հետևանքների:

2. Տեսչական մարմնի կողմից ընթացիկ ստուգումների ժամանակ քաղաքաշինական օբյեկտներում քաղաքաշինական սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության ընթացքում բացահայտվում են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և խախտումներ, որոնք կրկնվում են նույն քաղաքաշինական գործունեության սուբյեկտի կողմից տարբեր քաղաքաշինական օբյեկտներում: Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական գործունեության սուբյեկտների նկատմամբ միայն վարչական պատասխանատվություն կիրառելը չի նպաստում սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության բարելավմանը և մասնագիտական որակի բարձացմանը:

3. Առկա է մասնագետների արհեստավարժության խնդիր՝ հատկապես ստուգում իրականացնելու հարցում: Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը, քաղաքաշինության բնագավառում հասարակության

անվտանգությունն անմիջականորեն կախված են հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից:


4. Տեսչական մարմնի ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ համայնքներում կառուցապատողների կողմից կառուցվող հասարակական նշանակության օբյեկտների և գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը:

5. Տեսչական մարմնի կողմից համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի դրույթների վերահսկողություն է իրականացվում քաղաքաշինական օբյեկտներում և ճանապարհաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող քաղաքաշինական գործունեության նկատմամբ՝ այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների ողջ ժամանակահատվածում՝ դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկողությունն ապահովելու նպատակով: Քաղաքաշինական սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության ընթացքում բացահայտվում են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և խախտումներ, որոնք կրկնվում են նույն քաղաքաշինական գործունեության սուբյեկտի կողմից տարբեր քաղաքաշինական օբյեկտներում:


#### ***4.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը***

Քաղաքաշինության բնագավառում 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով 9 ամսվա ընթացքում իրականացվել է 287 պլանային և 82 ոչ պլանային ստուգում, որից 51-ը սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Իրականացվել է 2 վերստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ստուգումների արդյունքում բացահայտված խախտումները չեն վերացվել:

Ընդհանուր առմամբ, իրականացվել է 371 ստուգում, որից Երևանում՝ 128 (34,5%), Շիրակում՝ 29 (7,8%), Լոռիում՝ 25 (6,7%), Գեղարքունիքում՝ 22 (5,9%), Արագածոտնում՝ 20 (5,4%), Տավուշում՝ 18 (4,9%), Վայոց ձորում՝ 7 (1,9%), Կոտայքում՝ 29 (7,8%), Սյունիքում՝ 40 (10,8%), Արարատում՝ 26 (7%), Արմավիրում՝ 27 (7,3%):



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 1428 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Հիմնական խախտումները վերաբերում են.


➤ շինարարություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 564 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 39,5%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 161 դեպք,
- շինարարական աշխատանքների ընդհանուր մատյանը լրացված չէ՝ 66 դեպք
- բետոնի փորձարկման ակտի բացակայություն՝ 65 դեպք,

- շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 67 դեպք,
- կապալառուի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը առկա չեն՝ 62 դեպք.
  - շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 292 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 20,5%-ը: Առավել կրկնվող խախտումները վերաբերում են
    - շինարարության վարման մատյանում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումների բացակայությանը՝ 103 դեպք,
    - շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չստորագրելուն՝ 57 դեպք,
    - տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չլրացնելուն՝ 62 դեպք.
    - շինարարության նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 224 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 15,68%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.
      - շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 107 դեպք,
      - հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 66 դեպք,
      - բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 51 դեպք.
      - կառուցապատողների մոտ հայտնաբերվել է 117 խախտում՝ ընդհանուր խախտումների 8,19%-ը, որից ավելի հաճախ՝ 20-ում՝ տեղեկանքում նշված չէ շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը, 20-ում կառուցապատողը չի ապահովել շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով, իսկ 20-ում տեղեկանքում նշված չէ շինարարական աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը,
        - համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 218 խախտում, որը կազմում է ընդհանուր խախտումների 15,3%-ը,
        - ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 1 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,07%-ը,

➤ փորձաքննություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 12 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,84%-ը:

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 172 տեղեկանք:



### 4.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➤ Ստուգումները դեպի առավել ռիսկային ոլորտներ նպատակաուղղելու համար անհրաժեշտ է համայնքներում իրականացնել տեսչական ստուգումներ, որոնք կնպաստեն համայնքների ղեկավարների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխանող քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրմանը:

➤ Վերահսկողության ոլորտում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու նպատակով կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հետ: Մասնավորապես, Տեսչական մարմինը կունենա իր մասնակցությունը աշխատանքային խմբի կազմում՝ քաղաքաշինական թույլտվությունների առցանց համակարգի ներդրման աշխատանքներին:

➤ Նախատեսվում է նաև միասնական աշխատելառճ ձևավորելու նպատակով մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կողմից իրականացնել տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում: Հնարավորության դեպքում կկազմակերպվեն վերապատրաստումներ նաև կրթական հաստատությունների (հատկապես, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի) դասախոսների մասնակցությամբ: Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության կողմից կմշակվեն ուղեցույցներ ստուգումների, վարչարարության որակը բարձրացնելու նպատակով:

➤ Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով վերահսկողական մեխանիզմների ստեղծում և ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

➤ Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ. վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպումքննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

## **5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառ**

### ***5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը***


1. 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, նախաքննական մարմինների որոշումների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի գավթման, հրապարակային սակարկությունների գործընթացի խախտումները, պաշտոնական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, նույն եղանակով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման դեպքերը նվազել են, սակայն շարունակում են մնալ ռիսկային ուղղություններ: Բնագավառի կարևոր խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիր է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը, ինչն էական վնաս է հասցնում համայնքային և պետական շահերին:

2. Վերահսկողական գործառույթների իրականացումն ամբողջ ծավալով հնարավոր է ապահովել անձնակազմի թվաքանակի ավելացման և արդեն իսկ Տեսչական մարմնի կողմից ձեռք բերված անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության օգտագործման առկայության դեպքում:


### ***5.2 Ընթացիկ տարվա ստուգումների գործընթացը***

2022 թվականի 9 ամսվա ընթացքում իրականացվել է 8 ստուգում տարեկան ծրագրով և 15 ոչ պլանային ստուգում:

Ստուգումների արդյունքում արձանագրվել է 214 խախտում, որոնցից 185-ը բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված ստուգումների ժամանակ:



Խախտումները հիմնականում վերաբերում են հողամասի նպատակային և գործառնական նշանակությանների հետ առնչվող հարցերին: Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ: Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է իրավասու մարմիններին:





Տեսչական մարմնի կողմից հողօգտագործման բնագավառում իրականացված ստուգումների 34,78% կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները և 65,22%՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումները

### **5.3 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ**

➤ Օրենսդրական դաշտի կարգավորման շրջանակում

- անհրաժեշտ է վերանայել հողօգտագործման բնագավառում խախտումների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերը:

- պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործությունը կանխելու նպատակով կներկայացվի առաջարկ՝ իրավական դաշտում համապատասխան կարգավորումներ սահմանելու վերաբերյալ, մասնավորապես, նոր ՀՀ քրեական օրենսգրքում պաշտոնական լիազորություններն անցնելու հատուկ հանցակազմ նախատեսող արգելող նորմի նախատեսմանն ուղղված նախագիծ՝ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման նպատակով միջոցներ չձեռնարկելու համար:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նախաքննական մարմնի կողմից ստուգումների նշանակում, որը պարտադիր կատարման է ենթակա: Որոշակիության ապահովման նպատակով նախատեսվում է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքում կատարել փոփոխություն և լրացում՝ նախատեսելով դրույթ՝ նախաքննական մարմինների կողմից կայացված որոշումների հիման վրա ըստ անհրաժեշտության ստուգում իրականացնելու վերաբերյալ և մասնավորեցնել ընթացակարգ առ այն, որ նախաքննական մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված ակտը չի ուղարկվում ստուգվող անձանց և չի կայացվում իրավասու մարմիններ ուղարկելու մասին որոշում, այլ ակտն անմիջապես ուղարկվում է ստուգում նշանակած նախաքննական մարմնին:

➤ Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված է հսկողություն իրականացնող *մասնագետների քանակից և արհեստավարժությունից, հետևաբար անհրաժեշտություն կա*

վերապատրաստումների կազմակերպումից բացի, հաստիքացուցակով ավելացնել տվյալ բնագավառում հսկողություն իրականացնող մասնագետների քանակը:

➤ *Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

**6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

NN	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Վերջնա- ժամկետ
1	2	3	4	5	6
<b>ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</b>					
1	Բարձրագույն ուսումնական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	1. ԲՈՒՀերի հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում 2. ԲՈՒՀերի բազավորման աշխատանքների իրականացում 3. ԲՈՒՀերի հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում 4. Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև մարտի 31-ը
2	Զանգվածային ներկայության վայրերում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	1. ՀՀ զանգվածային ներկայության վայրերում հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում 2. Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև հունիսի 30-ը
3	Ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքների իրականացում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում	Մանկական հանգստյան ճամբարների հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և	Մինչև օգոստոսի 20-ը

				վերլուծությունների վարչություն	
4	Նպատակային հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով	Ատրակցիոնների հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Երևանի տարածքային ստորաբաժանում	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև մայիսի 1-ը
5	Հրդեհային անվտանգության բնագավառում ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2023 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
6	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2023 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
7	Շինարարների վարկանիշի հաշվարկի մեթոդաբանության մշակում՝ համագործակցելով շահագրգիռ մարմինների հետ:	Քաղաքաշինության տեսակետից առավել ռիսկային տնտեսավարողների բացահայտում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
<b>ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ</b>					

1	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	<p>1. Տրանսպորտի անվտանգության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում</p> <p>2. Հողօգտագործման բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում</p> <p>3. Քաղաքաշինության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում</p>	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ	Մինչև հունիսի 30-ը
2	«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Նախաքննական մարմնի կողմից նշանակված ստուգումներով այլ ընթացակարգ նախատեսելու նպատակով	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն	Մինչև հուլիսի 31-ը
3	ՍՏԵԽՆԻԿԿԿԿԱՆ անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	ՏԵԽՆԻԿԿԿԿԱՆ անվտանգության բնագավառում վերահսկողական մեխանիզմների հստակեցման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	ՏԵԽՆԻԿԿԿԿԱՆ և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև հունիսի 30-ը
4	Համապատասխան մարմնի կողմից ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորման նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը	Ջրային տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջների սահմանում, ոլորտում գործունեություն իրականացնողների պարտականությունների ու պատասխանատվության սահմանում, դրոշի պետության նավատորմի ստեղծում, ծովային անվտանգության ապահովում, ոլորտում ներգրավված անձանց սոցիալական օրենսդրության կանոնակարգում, ոլորտում միջպետական համագործակցության զարգացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	ՏԵԽՆԻԿԿԿԿԱՆ և հրդեհային անվտանգության վարչություն Տրանսպորտային անվտանգության վարչություն	Նախագիծը ստանալուց հետո սահմանված ժամկետում

5	<p>ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի Ոչայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը</p>	<p>Վերահսկման բնագավառներում անվտանգության ապահովման նպատակով ստուգումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ</p>	<p>Մինչև դեկտեմբերի 30-ը</p>
6	<p>ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը</p>	<p>Տիեզերական գործունեության, ինչպես նաև ԵԱՏՄ մի շարք կանոնակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ</p>	<p>Մինչև դեկտեմբերի 30-ը</p>
<b>ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ</b>					
7	<p>ՀՀ ԲՈՒՀերի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում</p>	<p>6 մասնագետի վերապատրաստում</p>	<p>Կառուցվածքային ստորաբաժանումներ</p>	<p>-</p>	<p>Մինչև դեկտեմբերի 30-ը</p>
8	<p>Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում</p>	<p>Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների բոլոր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում</p>	<p>Կառուցվածքային ստորաբաժանումներ</p>	<p>Որակի ապահովման վարչություն</p>	<p>Մինչև դեկտեմբերի 30-ը</p>

**ՔՏՀԱՏՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

9	Տարածքային ստորաբաժանումների կողմից 2019-2022 թվականների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն	Թերությունների և խախտումների բացահայտում, դրանց առաջացումը կանխելու նպատակով միջոցառումների ձեռնարկում	Որակի ապահովման վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Մինչև դեկտեմբերի 30-ը
---	---	--	-----------------------------	---------------------------------	-----------------------

**7. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	<p>Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ,</li> <li>2. Քաղաքաշինության ոլորտ,</li> <li>3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ,</li> <li>4. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտ</li> <li>5. Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտ</li> </ol>	<p>Մահմանված կանոնների պահպանման և իրազեկման մակարդակի բարձրացում տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շրջանում:</p> <p>Ըստ ոլորտների՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Թվով 12 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 3 աշխատանք)</li> <li>2. Թվով 12 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 3 աշխատանք)</li> <li>3. Թվով 16 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 4 աշխատանք)</li> <li>4. Թվով 8 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք)</li> <li>5. Թվով 12 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 3 աշխատանք)</li> </ol>	<p>Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին</p>	<p>Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վերջնաժամկետ-յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ</li> <li>2. Վերջնաժամկետ-յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ</li> <li>3. Վերջնաժամկետ-յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ</li> <li>4. Վերջնաժամկետ-յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ</li> <li>5. Վերջնաժամկետ-յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ</li> </ol>



2	<p>Իրազեկում-հանդիպումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ</p>	<p>Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովում, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երևան՝ 3 հանդիպում,</li> <li>2. Արագածոտն՝ 1 հանդիպում,</li> <li>3. Արարատ՝ 1 հանդիպում,</li> <li>4. Արմավիր՝ 1 հանդիպում,</li> <li>5. Գեղարքունիք՝ 1 հանդիպում,</li> <li>6. Կոտայք՝ 1 հանդիպում,</li> <li>7. Լոռի՝ 1 հանդիպում,</li> <li>8. Տավուշ՝ 1 հանդիպում:</li> <li>9. Շիրակ՝ 1 հանդիպում,</li> <li>10. Սյունիք մարզ՝ 1 հանդիպում,</li> <li>11. Վայոց Ձոր՝ 1 հանդիպում</li> </ol>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին</p>	<p>Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների, ղեկավարների, ղեկավարի տեղակալների մասնակցությամբ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ հունվար ամիս, 3-րդ տասնօրյակ. 1 հանդիպումը՝ 3-րդ եռամսյակ, հուլիս ամիս՝ 3-րդ տասնօրյակ, 1 հանդիպումը՝ 4-րդ եռամսյակ, դեկտեմբեր ամիս՝ 3-րդ տասնօրյակ</li> <li>2. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ, փետրվար ամիս, 3-րդ տասնօրյակ,</li> <li>3. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ, մարտ ամիս, 3-րդ տասնօրյակ.</li> <li>4. 1 հանդիպումը 2-րդ եռամսյակ, ապրիլ ամիս, 3-րդ տասնօրյակ.</li> <li>5. 1 հանդիպումը 2-րդ եռամսյակ, մայիս ամիս, 3-րդ տասնօրյակ.</li> <li>6. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, հունիս ամիս, 3-րդ տասնօրյակ.</li> <li>7. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, հուլիս ամիս, 3-րդ տասնօրյակ.,</li> <li>8. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, օգոստոս ամիս, 3-րդ տասնօրյակ.</li> </ol>
---	---	---	---	--	---

					<p>9. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, սեպտեմբեր ամիս, 3-րդ եռամսյակ, 3-րդ տասնօրյակ.</p> <p>10. 1 հանդիպումը 4-րդ եռամսյակ, հոկտեմբեր ամիս, 3-րդ տասնօրյակ,</p> <p>11. 1 հանդիպումը 4-րդ եռամսյակ, նոյեմբեր ամիս, 3-րդ տասնօրյակ</p>
3	Իրազեկող հրապարակումների, մամուլի հաղորդագրությունների և տեսանյութերի պատրաստում և հրապարակում	<p>Հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, թափանցիկ և հաշվետվողական աշխատանքների իրականացում</p> <p>Ընդհանուր 40 մամուլի հաղորդագրություն: Թվով 4 իրազեկող տեսանյութ</p>	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Յուրօրինակ եռամսյակ 10-ական հրապարակում և յուրաքանչյուր եռամսյակ 1 իրազեկող տեսանյութ
4	Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 1 մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում	Տեսչական մարմնի և տպագիր, առցանց ՁԼՄ-երի, հեռուստաընկերությունների ներկայացուցիչների միջև համագործակցության, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և ստորաբաժանումներ	Կամ առաջին եռամսյակ՝ մինչև մարտի 3-րդ տասնօրյակ  Կամ երրորդ եռամսյակ՝ մինչև սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ (հաշվի առնելով ընթացիկ աշխատանքը)

5	<p>Ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում</p>	<p>Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում, գնահատում</p>	<p>Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն և Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակի ամփոփումից հետո 1 ամսյա ժամկետում</p>
6	<p>ՀԿ-ների, պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում իրազեկող բնույթի սոցիալական հոլովակների, կանխարգելիչ միջոցառումների իրականացում</p>	<p>Հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտի վերաբերյալ՝ մասնավորապես խտածածկ և բուսածածկ հատվածներում հնարավոր հրդեհներից խուսափելու, հանրության շրջանում իրազեկվածության և անվտանգության մակարդակի բարձրացում, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքների իրականացում</p>	<p>Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին</p>	<p>Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն</p>	<p>Անհրաժեշտ ֆինանսավորման առկայության դեպքում</p>